Եղե՛ք իրազեկ: Եղե՛ք ներգրավված: Մասնակցե՛ք մարդահամարին:

Ձեր 2020թ. մարդահամարի ուղեցույցը ընտանիքների համար

Արդյո՞ք շատ բացասական կլինի իմ կողմից մարդահամարը չլրացնելու հետևանքը:

Ամեն տարի մոտ 115 միլիարդ դոլար է ծախսվում California-ի դպրոցների, առողջապահության, բնակարանային պայմանների երաշխավորման, փոխադրման և մարդահամարի տվյալներով սահմանված այլ կենսական կարևորության ծրագրերի վրա:

2010թ. մոտ 74,000 երեխա մարդահամար չէր անցել Los Angeles-ի շրջանում: Ոչ ճշգրիտ մարդահամարը վատ է անդրադառնում այն ծրագրերի ֆինանսավորման վրա, որոնք նախատեսված են փոքր երեխաների համար, այդ թվում Head Start-ը, Երեխաների բժշկական ապահովագրության ծրագիրը (ԵԲԱԾ), Լրացուցիչ սննդի աջակցության ծրագիր (ԼՍԱԾ, ուտելիքի կտրոններ) և Դպրոցի լանչի ազգային ծրագիրը: Այսօրվա ձեր գործողությունները կունենան իրենց ազդեցությունը ձեր երեխաների և նրանց ապագայի վրա: Կատարեք ձեր բաժին պարտականությունը՝ երաշխավորելու, որ ձեր ընտանիքում ցանկացածը մարդահամարն անցնի:

Ո՞վ պետք է մարդահամար անցնի:

Հիմնականում ձեր հասցեում (այդ թվում ձեր սեփականությունում առկա ավտոտնակում կամ անիվների վրա տանը) մնացող կամ ապրող յուրաքանչյուր անձ պետք է մարդահամար անցնի՝ անկախ տարիքից: Հաշվառե՛ք բոլոր երեխաներին, այդ թվում նորածիններին ու մինչև 1 տարեկան երեխաներին, նույնիսկ եթե նրանք դեռ հիվանդանոցում են 2020թ ապրիլի 1-ին (Մարդահամարի օր): Այն երեխաները, որոնք տարվա ընթացքում իրենց ժամանակն անց են կացնում երկու տներում պետք է մարդահամար անցնեն այն ընտանիքում, որտեղ ապրում են 2020թ. ապրիլի 1-ի դրությամբ: Հիշեցրե՛ք ձեր ընտանիքում մարդահամարի հարցաթերթիկը լրացնող անձին հաշվառել բոլոր երեխաներին:

Ո՞ր հարցերն են ներառված լինելու մարդահամարում:

Հարցաթերթիկում պահանջվում է հետևյալ տեղեկությունները յուրաքանչյուր անձի վերաբերյալ.

- տարիք
- ծննդյան օրը
- Իսպանական կամ Լատինական ծագումը
- ռասսա
- հարաբերությունները ընտանիքի ղեկավարի հետ
- սեռը
- վարձակալ կամ տան տեր
- այլ հարցեր (ինչպես օրինակ յուրաքանչյուրի անունը և տան հեռախոսահամարը)

Հարցաշարը լրացնելու համար պահանջվում է մոտ 10 րոպե, բայց ավելի շատ ժամանակ կարող է պահանջվել, եթե ձեր ընտանիքում բազմաթիվ մարդիկ են ապրում:



Ձեզնից չեն պահանջի տրամադրել ձեր ընտանիքում որևէ մեկի Հանրային ծառայության համարանիշը կամ ներգաղթի կարգավիճակը:

Los Angeles քաղաքը մատչելի հարմարություն(ներ) կտրամադրի՝ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իր ծրագրերի, ծառայությունների և հաստատությունների հավասար հասանելիությունը երաշխավորելու նպատակով:Պահանջ ներկայացնելու համար կապվեք ՊՆ Հաշմանդամության Դեպարտամենտի հետ՝ DOD.Contact@lacity.org-ով կամ (213) 202-5668-ով հինգ կամ ավելի աշխատանքային օր առաջ:

Eric Garcetti @MayorOfLA

census.lacity.org

#2020Census